# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2025 թվականի N 284 - Ա

## ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանն ամրացված 9 տրանսպորտային միջոցը (այսուհետ՝ գույք)՝ համաձայն հավելվածի, հետ վերցնել և ամրացնել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը ենթակա՝ օտարերկրյա պետություններում գործող առանձնացված ստորաբաժանումներին (այսուհետ՝ օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններ):

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում համապատասխան իրավական ակտով ապահովել սույն որոշման հավելվածում նշված տրանսպորտային միջոցների բաշխումն օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններին:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի կողմից սույն որոշման 2-րդ

կետում նշված իրավական ակտն ընդունելուց հետո մեկամսյա ժամկետում սույն որոշման հավելվածում նշված գույքի համար տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր՝ օտարերկրյա պետություններ տեղափոխելու գործընթացը կազմակերպելու նպատակով:

4. Սահմանել, որ սույն որոշման հավելվածով նախատեսված գույքի հաշվառման և օտարերկրյա պետություններ տեղափոխման հետ կապված անհրաժեշտ ծախսերն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ